



ՕՐԱԳԻՐ ՁՄԻՒՌՆԻՈՅ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱՌԵՏՐԱԿԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ՌԵԴԱԿՏՈՐԻ ՏԱՐԻ

ՁՄԻՒՌՆԻՈՅ ԵՄԲԱԹ 13 ՄԱՅԻՍ 1878

ԹԻԻ 1092

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Եթէ հեռագրական լրոց հաւատ ընծայելոյ լինիմք, քաղաքային կացութիւնն՝ զինի մի քանի օր երկիւղալի և սպառնական փոփոխութեանց ենթակայ լինելոյ, դարձեալ խաղաղափրական կերպարան մի կառնու։ Ի վէննայէ Մայիս 6-18էն արձակեալ հեռագիր մի կըսէ թէ Բէքէրսպուրկի հեռագրական լուրքն խաղաղափրական տրամագրութիւններ կը ծանուցանեն վերստին, յաւելցելով թէ հաւանական է որ Եսպանաժողովն գումարուի անյապաղ, Դարձեալ ուրիշ հեռագիր մի կըսէ թէ անգղիական թերթն զգոհունակութիւն իւրեանց ծանուցանեն ի մասին խաղաղասիրական յայտարարութեանը՝ հասելոյ ի Բէքէրսպուրկէ։ Յայտարարաբար է ժամանեալ ուրիշ հեռագիրք ևս բոլորովին սուտ է կըսեն այն համբաւն՝ թէ Ռուսք կը պատրաստուին ի Կ. Պոլիս մտանել կամ ևս տաւել մերձեանալ ի նոյն մայրաքաղաքն։ Կհոստատեն նաև թէ Շուվարֆի կոմսն որ Չարին կատարեալ վստահութիւնը կը վայելէ և խաղաղասիրական զգայմամբ ոգևորեալ է միշտ, իրականաբար իշխանութիւն ընդունած է ինքարձակ շնորհամեներ ընելու։ Կը յաւելցեն նաև անպէտ թէ հիմնական պայմանքն արդէն որոշեալ են ի կարգադրութիւն գծաւորութեանց և տարածայնութեանց եղելոյ ի մէջ խաղաղութեանց լսնածնի և Բէքէրսպուրկի։

«Կազմէ թը Բուլքին» օրագրոյն մէջ ևս զհեռանալ տեղեկութիւնսն ընթերցումք, որք հաղորդեալ են նմա ի Պէրլինէ։

Այսօր ի զանազան կողմանց կը հաստատուի խաղաղասիրական լուր մի՝ այսինքն թէ Ռուսիան հիմնական շնորհամեներ ըրած է և մեծապոյն քան զայնս՝ որ մինչև ցայսօր հաւանութիւն տուած էր ընելու, և թէ Չարին անձնական

միջամտութեան արդիւնքն են այս շնորհամեներն, որոց կարևորութիւնն թէև տակաւին յայտնի չէ՝ ճշգիւ, բայց կերեւի թէ շուտ են և նշանաւոր։ Վասնզի ի վէննայէ կը գրեն թէ Աւստրոհունգարիոյ կառավարութիւնն գոհ եղած է և թէ հոգ պիտի տանի աշխատիլ գործունէութեամբ ի Լոնտոն, որպէսզի Անգլիան ևս կերպապէս յայտնէ զգոհունակութիւն իւր։ Ուրեմն յոյժ կարելի է որ համաձայնութիւն մի հաստատուի ի մէջ Անգլիոյ և Ռուսիոյ։ Այսու ամենայնիւ նոր խաղաղութիւնութիւնը կրնան ծագիլ եթէ Աւստրիան հարկադրուի զուգահեռական գրաւումն մի (occupation) ընել։ Այսինքն հաղորդակից լինել Թուրքիոյ կողմնակցութեան։ Անգլիան կը մերժէ միշտ առնուլ զԵրկրորդն կամ խոտորիլ, որ և է կերպիւ ի հասարակաց իրաւանց։

Հեռագիրն կը ծանուցանէ թէ Շուվարֆի կոմսն որ արդէն հասեալ պիտի լինի ի Լոնտոն, ի վերադարձին իւր ի Բէքէրսպուրկէ, օր մի մնացել է ի Պէրլին, ուր տեսակցել է Կիլլմարկայսեր, ինչպէս նաև Պիլմարք ի խանին հետ։

Մեծին Բրիտանիոյ եկամտից նախարար սըր Սթաֆֆորտ Նորթքոթ՝ Օքսֆորտի մէջ պատասխանելով պատգամաւորութեան մի որ իւր հաւանութիւնն կուտար կառավարութեան ընթացքին ի մասին Արևելեան խնդրոյն, ասաց։

«Թէև մեծ են դժուարութիւնքն որոց դէմ Անգլիան պարտաւորեալ է մտքաւել, բայց և այնպէս այս դժուարութիւնքն կըսկսին նուազիլ, և կառավարութիւնն կը յուսայ թէ խաղաղասիրական կարգադրութիւն մի կրնայ լինել»։

Այս յայտն կը հաստատուի ի հետեւեալ հեռագրէ՝ արձակեալ ի Բէքէրսպուրկէ Մայիս 5-17 ամսամիջով։

«Կերեւի թէ Շուվարֆի կոմսն յաջողեալ է ապացուցանել Չարին թէ Ռուսիոյ օգտից նպատակաւ է ի գործ դնել զմեծագոյն մասն շնորհամեներ որք կը խնդրուին։ Ուստի Դեսպանատո»

ղովոյն գումարումն հաստատուն կը համարուի ըստ ամենայն երևմանց»։

Միեւնոյն յուսոյն նպատաստանոց կը համարուիք լ'Ափանս Ռիւս օրագրոյն մի յօդուածն, որոյ մէջ խօսելով ի վերայ զինուորական մեծամեծ պատրաստութեանց Անգլիոյ և Ռուսիոյ, այս կէս պաշտօնական օրագիրն կըսէ թէ՝ «Անշուշտ լուրագոյն պիտի լինէր՝ որ այս հոկտեմբերին միջոցներն ի գործ դրուէին ի նպատակ մարդկութեան և քաղաքակրթութեան, Անգլիան և Ռուսիան արդէն ապացուցին զկենդանական մեծ զօրութիւնս իւրեանց։ Այս երկու գլխաւոր ազգքն, կը յարէ լ'Ափանս Ռիւս, կրնան իրարու դէմ՝ պատերազմիլ երկար տարիներ առանց նուաճութեան միոյն և միւսոյն։ Պարտին ուրեմն նախամեծար համարիլ իրարու օգնել, փոխանակ զիրար տկարացնելոյ»։

Ինչպէս կը տեսնուի ի նախընթաց տեղեկութեանց, խաղաղասիրական զուարթագիւն հովը դարձեալ կը փչէ՝ բայց տար Աստուած, որ հաստատուն կերպիւ շարունակէր փչելու ի միջի մարութիւն տառապեալ ժողովրդոց։

Ի Կ. Պոլսոյ կը գրեն թէ ոմանք ի կուսակցաց նախորդ Սուլթան Մուրատին՝ ընկերութեամբ բազում Կաղթականաց փորձ փորձեցին յափշտակել զնա ի պաշտօնէն Չարլանի, ուր կը բնակի։ Այս յանդուգն փորձոյն առթիւ տախտակէն կը կուր մի տեղի ունեցաւ ընդ պահապան զօրաց, և սպաննուց ու վերաւորելոյ թիւն 30ի կը հասնի կըսեն։ Արի—Սիւլթան փաշան՝ որ այս ապստամբական շարժման առաջնորդն էր, յիշեալ կուռոյն մէջ սպանուել է։ Իսկ իւր գլխաւոր մեղսակիցքն բռնուել ի բանտ դրուել են։

Մայրաքաղաքն ի կատարեալ հանգարտութեան կը գտնուի և նախարարք ի ժողով գումարուել են ի կայսերական պալատն՝ երկուրդ փէօշքի անուանեալ։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Փարիզի ՏէՊԱ օրագրոյն Ապրիլ 16 քուոյն մեջ Հայոց ազգին վերաբերեալ կարեւոր նամակ մի քննարկեցաք, գոր մտադիր էինք բարգմանել։ Բայց զայս աշխատութիւնն արդէն կատարած ըլլալով պատուական ՄԱՍԻՍՆ, ի նմանք բաղելով կը հաղորդեմք մեր ընթերցողաց զնոյն նամակն, որ ուղղեալ է առ խմբագրապետն յիշեալ գաղղիական թերթին։

«Դուք քանիցս անգամ Ռուսաց պահանջումն ներուճ դէմ Ռուսիանց ըրած հիմնաւոր գտնադասներուն վրայ խօսեցաք։ Նմանապէս Յուսոյ իրաւապահանջութեանց վրայ գրեցիք, և անոնց արդարացի ըլլալը ցոյց տուիք։ Բայց Օսմանեան կայսրութեան կրելիք հիմնական փոփոխութեանց մէջ իրաւանց պահանջումն ունեցողները միայն Յոյներն ու Ռուսները չեն։ Հայերն ալ իրաւունքներ ունին, զորոս թէև զին ի ձեռին պահանջած չեն երբէք, թէև ուրիշ ամեն ժողովուրդներէն աւելի հլոթեամբ հպատակած են թուրքաց իշխանութեան, թէև երկրին ընդհանուր կառավարութեան մէջ գործն մասնակցութիւն մ'ունեցած և իրենց անփութի ուշմութեամբն ու ճարպիկութեամբ ազգեցութիւն ձեռք բերած են երկրին մէջ, սակայն իրենց իրաւունքները գուցէ Օսմանեան իշխանութեան ներքեւ գտնուող ամեն ազգութեանց իրաւունքներէն աւելի բացայայտ գրծուած են։ Ինչ որ ալ ըլլայ, ամենէն հինն ըլլալուն տարակոյս չկայ։ Հայք, առանց բնաւ հա»

կուակ ըլլալու եւրոպական քաղաքակրթութեան չէն կրնար իրօք այն ժողովրդոց կարգէն համարուիլ, որք խիստ հին ժամանակներէ ի վեր իրենց ազգութիւնը, լեզուն և յատուկ նկարագիրը լաւ պահած են, և սակայն որչափ այլազան իշխանութեանց ներքեւ լինած են, բիրտ և վայրագ իշխանութեանց, որոց վերջին նկարագիրն են Քրդաց և Չէրքէզաց բռնութիւնները։ Միթէ վերջին պատերազմին ժամանակ այդ վայրագներն Հայաստանի մէջ հաղարաւոր զահեր չըլին»։

Այս Սթեֆանոսի դաշնագրութեան 16րդ յօդուածը բացորոշապէս կը ճանաչէ թէ Հայոց նկատմամբ ալ անօրէնութիւն մ'ընել հարկ է։

«Նկատելով որ, կըսէ յիշեալ յօդուածը, Ռուսական զօրաց Հայաստանի մէջ գրաւած բայց թուրքոյ վերագործնելիք տեղերէն մեկնելը՝ կրնայ կուռնեցու և երկու տերութեանց բարեկամական յարաբերութիւններուն վնաս բերող կնճիռներու ծնունդ տալ, Դուք պարտաւորութիւն յանձն կառնու Հայոց բնակած գաւառներուն մէջ տեղական պիտոյից պահանջած բարեօրոշմներն ու բարենորոգումներն առանց այլ ևս յապաղելու գործադրել, և Բիւրդերուն ու Չէրքէզներուն դէմ անոնց ապահովութիւնն երաշխաւորել»։

«Այս յօդուածը, թէ և հակիրճ՝ բայց շատ պերճախօս է։ Արդարեւ, ինչպէս կը ըլլայ, որ Ռուսիա՝ Բ. Դրան խոտորմներուն սովորաբար վստահութիւն չընծայած ժամանակ, և այս ալ ոչ առանց իրաւանց, Հայաստանի ապահովութեան խնդրոյն մէջ յանկուրդ անոր խոտորմնը

կը կապուի։ Ճշմարիտ է որ յօդուածին առաջին պարբերութեան մէջ երկրայնութիւնն և երկրաշարժութեանն աւելի կը նշանակուի, վասնզի յոյս կը յայտնուի թէ «կուռնեցու և երկու տերութեանց յարաբերութիւններուն վնասաբեր կնճիռներ պիտի ծագին»։ Ճշմարիտ է նաև որ պայման դրուած է թէ բարձր Ասիոյ հայկական դաւառները նոյն վարչութիւնը պիտի ունենան ինչ որ ունենան Պալքանայ քրիստոնեայ դաւառներէն ոմանք, և տեղական պիտոյից յարմար բարենորոգումներ պիտի ստանան։ Բայց այս ամենն ալ խիստ տարաւոր են, և շատ չեն քաջալերել հայրենասէր հայերն, որոց հետ աւելի ունեցայ իրենց ներկային ու ապագային վրայ խօսակցելու։

«Ասոնք ծայրայեղ բաղձանքներ չունին։ Օսմանեան հպատակութեանն ազատիլ և Հայաստանի մէջ թագաւորութիւն հաստատել չեն մտաբերեր։ Նմանապէս իրենց կրած չարիքն իրենց երկրին մէջ գտնուող իսլամ ժողովրդոց հասուցանել չեն ուզեր։ Այլ մէկ բանի մը կը բաղձան, այն է՝ իրենց գործունէութիւնը զարգացնելու ազատութեան։ Այն ժամանակ կարող կըլլան իսլամաց հետ ի միասին ապրել, և ոչ թէ բռնութեամբ՝ այլ միայն համազօրութեամբ շահուց ձուլում յառաջ բերել, երազմը որ միշտ հետամուտներ ունեցած է, բայց ոչ հասնող»։

«Եւ արդարեւ Հայերը կարող չեն իրենց մէջ լաւ վարչութեան մ'ամեն տարեւրք գտնելու, որ միայն կրնայ հակադիմութիւնները ջնջել և միտքերը խաղաղել։ Հայք աշխատասէր են, կիրթ և արեւմտեան որեւէ ժողովրդոց չափ կը»

ԱՉԳԱՅԻՆ

Քաղաքիս Հայոց Աղքատախնայը ընկերութիւնն՝ ըստ ամեն տարուան սովորութեան իւր եօթնհետասներորդ տարեգարձն կատարեց ի ին տմնոյս, և այս առթիւ հանգիստաւ պաշտօն և պատարագ մատուցաւ ի Ս. Ստեփաննոս եկեղեցին ի նախընթաց օրն՝ որ էր կիրակի :

Տարեգարձին հանգիստն օրն, որ կատարեցաւ ի Մենիմէն գիւղաքաղաքն մասնաւոր հայրերով ի միով, Աղքատախնայը ընկերութեան Ատենապետ մեծարգոյ Յովհաննէս Միքէլապատուելին՝ պարագայիս յարմար համառօտ ատենախօսութենէ մի ետեւ, զհետեւեալ յորդորական երգն ուղղեց առ բարեպաշտ Անդամս յիշեալ մարդասիրական ընկերութեան :

Ձիւն մեծ բարիք քան ի գութ, սէր
Օգնել կարօտ ընկերին,
Եւ սիրովել վիշտն ու ցաւեր
Խեղճ ու հիւանդ աղքատին :

Սիրաք մեր վառ ի վառ բորբոքին, եղբարք,
Յաւոյ աղքատաց դարման ընծաւել,
Մահու ժանիքէն թշուառներն համակ
Ճարտար խնամովք վաղ ընդ փոյթ փրկել :

Ձիւն բարի քան ի գութ, սէր
Օգնել կարօտ ընկերին,
Եւ սիրովել վիշտն ու ցաւեր
Խեղճ ու հիւանդ աղքատին :

Հայ, ուտեստ տամք մեք անոք քաղցելոյն,
Բժիշկ, դեղ, դարման ցաւադար խեղճին,
Հողամք լիւրի պէտքեր ամենուն,
Որ ընդ լծով են դժնդակ բաղդին :

Ո՛հ, մեծ բարիք են ի գութ, սէր
Օգնել կարօտ ընկերին,
Եւ սիրովել վիշտն ու ցաւեր
Խեղճ ու հիւանդ աղքատին :

Օ՛ն ուրեմն, եղբարք, եղբարք գթութեան,
Յարասե ի ջան, ի սէր խնդալին,
Մի սիրտ մի հոգի աշխատիմք համայն
Հետեւող լինել Տիրոջ պատգամին :

Հապա ընկերք Աղքատասէր,
Օգնեմք կարօտ ընկերին,
Եւ սիրովեմք վիշտն ու ցաւեր
Խեղճ ու հիւանդ աղքատին :

—Մեր աչաց առջև ունիմք զհաշուեցուցակ
վեշտասաներորդ ամին Աղքատախնայը ընկերութեան քաղաքիս, ըստ նոյն հաշուեցուցակին յիշեալ ընկերութեան մուտքն՝ հանդերձ ան-

րոպական քաղաքակրթութեան յառաջագիւտութիւններուն ընդել: Ուստի այդ երկրին ինքնօրէն վարչութիւն մը շնորհելը բնաւ վախճալու բան մը չունի, և որեւիցէ լուրջ արգելք մը չկրնար ընդգիծման աղքատին: Մանաւանդ Հայոց ցրուեալ վիճակն առարկելու իրաւունք ալ չկայ: Վասնզի Օսմանեան ոչ մէկ գաւառի մէջ հնար չէ աւելի հոծ համախմբութիւն մ'իւն ակներեւ մեծամասնութիւն գտնել:

«Թուրքիոյ ձեռքը մնացած բարձր Հայաստանի և Մեծ Հայաստանի մէջ, յորմէ Եփրատ և Տիգրիս գետերը կանցնին, և որ հարաւի կողմէն մինչև Տաւրոսի ստորոտն, և արևմտից կողմէն ալ մինչև Էնկիւրիի շրջակաները կը տարածի, պաշտօնական վիճակագրութեան ցոյց տրուած 3,523,343 բնակչաց երկու միլիոնէն աւելին Հայ են. և տակաւին շուտով կրնան աւելնալ այն ամեն Հայերով, որք ապրողոտի միլիոններ գտնելու համար դուրս ելած են: Միայն Պոլսոյ մէջ 100,000-ի մօտ Հայ կայ: Կարնոյ գաւառին մէջ 1,600,000 բնակչաց 1 միլիոնը Հայ, 400,000-ը Թուրք, 200,000-ը Քիւրդ, մնացեալներն Եփրատի և ուրիշ սատանայապաշտք են: Այսպիսի պատահաւոր մեծամասնութիւն մը՝ վայրագ և աւարառու ցեղերու անդուլ ասպատակութեանց ենթակայ եղած է, զորս Թուրք կառավարութիւնն անկարող է արգելելու, և խիստ թոյլ կերպիւ կը ջնայ զպէս: Քրիստոնեայ ժողովուրդները պաշտպանելու քիչ յօժարութիւն ցուցած է միշտ, և երբոր այս տեսակ առթի մը մէջ գործել պէտք ըլլայ, շատ անգամ անզոր կը զտնուի:

Հարժ և շարժուն դրամագլխով իւրով, կհասնի ի դումար 144,611,500 զուրուշից, արծաթ մէծիւտէն 20 զուրուշ հաշուելով: Իսկ ելքն այսինքն տարեկան ծախք նորին վստն պիտոյից աղքատաց ևայն 21,130 զուրուշ է, մէծիւտէն դարձեալ 20 զուրուշ հաշուելով:

Ուրտի սրտիւ կընկատեմք, թէ Աղքատախնայը ընկերութիւնն չեմք մեծաւոր օրհնութեամբ աղքատաց և իւր բարեպաշտ անդամաց դովելի ջանքն, օրըստօրէ դարգանալու և յառաջագիւտութեան վերայ է. քանզի կըտեսնեմք որ անցեալ տարւոյն ամբողջ բաժանորդադրութեանց գումարն 9,852,500 զուրուշ է և ի նպատակ աղքատաց տրուած պարահանդէսէն 14,025 զուրուշ գոյացեր է, ևայն:

Ահաւասիկ Աղքատախնայը անշարժ և շարժուն ստացուածքն, զոր յիշած եմք ի վերոյ. Տան մի արժէքն ի ճանաւ կամուրջի զձ 8,500 երեք պարտամուհակք 90,537 Պարտաստ դրամ 1,936 Ժողովելք 569 Արժէք դեղոյ ի դեղարանի ընկերու 14,000

Զուրուշ 115,542

Յենթաց վեշտասաներորդ շրջանին՝ Աղքատախնայը ընկերութիւնն 631 աղքային հիւանդաց խնամ տարեր է. յորոց 607ն առողջացեր է, 10ն տակաւին ընդ խնամով բժշկի կը դըմարեն և 14 հիւանդք մեռեր են:



ՄԱՀԱԳՈՅԺ

Յաւօք սրտի կը պարտաւորեմք ծանուցանել զփոխումն առ Աստուած մեծարգոյ Կարապետ Էֆէնտիի Պապայեան Կ. Պօլսեցւոյ, որ զկրի երկարատե հիւանդութեան միոյ՝ կնքեց զմահահանացու ընթացի իւր ի կիրակի առաւրջ յՅեւրոդումն ամսոյն ի Պօլսեցւոյ դիւղն ի հասակի իւր 35 ամաց:

Հանդուցեալն՝ որ ի կողմանէ մօրն թողն էր կայսերական վառօդապիտ մեծահամբաւ Տատեան Յօհաննէս—Պէյլին, ի բազումամաց հետէ

«Ուրեմն անհրաժեշտ է որ շարունակ սպառնալեաց ներքեւ գտնուող այս քրիստոնեայ տարերքն իրենք զիրենք պաշտպանելու վիճակի մէջ գտնին: Հայերն ասկէց զատ ուրիշ բան չեն պահանջեր: Եթէ վերջապէս չկրնան այս հիմնադէս բնական իրաւունքը ձեռք բերել, Օսմանեան կայսրութեան անբաժանելի մէկ մասը մնալու բազմաքնուն հակառակ պիտի ըստիպուին երթալ ուրիշ պաշտպանութիւն մը խնդրելու, որ կարող ըլլայ իրենց կեանքն ու գոյքն ապահովել: Վասնզի պարզապէս ոստիկանութեան խնդիր մ'է այս:

«Թուրքիոյ անցեալը գիւղացիները ապագային համար քաջաբերէ չըլլալով, Այսթիֆա-նոսի դաշնագրութեան 16րդ յօդուածն՝ իւր ներկայ իմաստով՝ Ռուսաց Հայաստանի մէջ տարածուելուն ճանապարհները միայն կը պատրաստէ: Եփրատայ ձորն և Տաւրոսի բոլոր գօտիներն այս կերպիւ մօտալուտ գրաւման մ'սպառնալեաց ներքեւ կը գտնուին, դրաւում մը, որուն առաջին առնելու մէկ միջոց մը միայն կայ, այն է ինքնօրինութիւն:

«Հայաստան Ռուսիոյ բազկաց մէջ նետելը միթէ բռնաբարել չէ՝ ազգութեանց մեծ սկզբունքն, յանուն որոյ քանի տարիէ ի վեր Եւրոպա տակնի վերայ կըլլայ: Միթէ Սլավ տարերք կան Կարնոյ և Տրապիզոնի կուսակալութիւններէն մնացած գաւառացի մէջ, վստայ Սերաստիոյ և Տրապիզոնի կուսակալութեանց մէջ և Տաւրոսէն անդին Կիլիկիոյ մէջ: Հայր խիստ հեռի է Սլավութենէ: Գտնէ կրօնական շահ մը կենայ. բնաւ ամենեւին, Հայն և ոչ իսկ

ի Զմիւռնա կըրնակէր, ուր օսմանեան կայսրութիւնն փարոսներու գործակալութեան (Agence) ընդհանուր Տնօրէնն էր:

Ռուսիական և քաջ գաղղիագէտ, վախճանեալն իւր քաղցր բնաւորութեամբն և իւր գործունեայ ընթացքովն ոչ միայն փարոսներու ձեռնարկութեան գաղղիացի վարձակալաց (cessionnaire), այսինքն իւր բարեխնամ մեծաւորաց համարումը և շնորհը լիովին կը վայելէր, այլև քաղաքիս ազգայնոց և օտարականաց համակրութիւնն ի ձեռք բերած էր: Այս համակրական սէրն կատարելապէս յայտնեցաւ յենթաց հիւանդութեան Պապայեան Էֆէնտիի, մասնաւոր ի վերջին առաւրջ նորա: Սէր համակրական և եղբայրական, զոր գովութեան և շնորհակալութեան արժանի կը համարեմք:

Հանդուցելոյն մարմինն երկուշարժի օրն ի Պօլսեցւոյն ի քաղաք ի Ս. Եկեղեցին բերուելով՝ նորա յուղարկաւորութեան տխուր հանդէսն առաջնորդութեամբ քանի չափ քաղաքապետ զորաց և ուղեկցութեամբ եկեղեցական դասուն ու բազմաթիւ աշխարհականաց՝ փառաւորապէս կատարեցաւ մի քանի փողոցներէն անցնելով Հայոց թաղին, որում իւր թէ զվերջին հրաժեշտի սիրալիւ ողջոյն իւր կուտար:

Մեր գերօր. Ս. Առաջնորդն համառօտ դամբանախօսութեամբ մի վախճանելոյն առաքինական գեղեցիկ յատկութիւններն յառաջ բերելէ ետեւ, նորա դադարէն վերայ՝ որ ծաղկոյ պտուիք դարգարեալ էր, հետեւեալ ատենախօսութիւնն կարգացուցաւ ի կողմանէ բարեկամաց հանդուցելոյն:

Մեծարոյ հանդիսականք,

Եթէ երբէք առաքինի, ընկերասէր ու խոնարհ բնութիւն մը յիշուելու արժանի է Պապայեանի բազմաթիւ բարեկամները ևս կուրեն յետին երթաւ բարեւ մ'ըսել իրենց սիրելին, որ այսօր հողը կըմանէ: Կարապետիլը, այն զուարթ ու արթուն տղաքներէ էր՝ որոնք ամենու համակրութիւնը կը գրաւէին, ամենէն կը սիրուին և ամենու սրտին մէջ յիշատակ մը կը թողուն: Մեզի համար ոչ միայն մանկութեան ընկեր ու բարեկամ՝ այլև քաղաքակրթ մ'էր անի: Մեծօրոպեան դպրոցի և Անդրեան վարժարանի վաղեմի աշակերտներէ մին՝ Պապայեանը իւր ուսումները իզմիրի մէջ կատարած էր, մանկութենէ ի վեր մեր քաղաքը սիրելով:

Տառնուհինգ տարի է արգէն՝ որ քաղքիս ծովածոցի լապտերներու գլուխներէն ընդհա-

Օրթօտօքս է բառին Յունական նշանակութիւն:

«Քաղաքականապէս Հայաստան Ասիոյ մէջ է ապէս չեղած տարր մը կը ներկայացնէ, ինչպէս Եւրոպիոյ մէջ Չինացիքն, որուն կրօնաւանդ իւր բնակչաց բնաւորութեամբն ու արտադրութեամբք, և միութեան գիծ մը կը կապուի Արևմտի և Արևելից միջև, որոյ ճշմարիտ քաղաքակրթիչ սկզբունքն ըլլալու սահմանաւոր է:

«Թող չխաբուի Եւրոպա, Հայք իրենց դատը պաշտպանելով՝ միանգամայն Եւրոպիոյ շահերը կը պաշտպանեն: Եթէ Ռուսիա, չենք ըսել 16րդ յօդուածին հակառակ, այլ անոր զօրութեամբ, որովհետեւ անխուսափելի վախճանի մը բողբոջները կը պարունակէ, Հայաստանը Ռուսական նոր գաւառ մ'ընելու յաջողի, Եփրատայ ձորն անոր ձեռքը կանցնի, Սուրիա վտանգի մէջ կ'ընայ, և Միջերկրական ետեւն ու կողէն սպառնալեաց կենթարկի մերձաւոր ապագայի մը մէջ:

«Հայք մեծ գիւղացիութիւն չունեցան այս վտանգը ցոյց տալու այլևայլ տէրութեանց: Գործին վիճակը ներկայացնել բուսական էր: Միանգամայն ցոյց տուին իրենցմէ առաջարկեալ գեղն, որ է ինքնօրինութիւն: Ուրիշ բան է ի՞նչ գաշնագրութեան 16րդ յօդուածն Եւրոպական յօդուած մ'ըլլայ, այսինքն ի՞նչ Եւրոպա անոր իսկապէս և վերջնական գործադրութեանն հակէ: Կը յուսան որ այս մասին ձեռնառութիւն չպիտի պատի իրենց, որովհետեւ ընդհանուր շահու խնդիր կայ: Համարուած են որ այս խնդիրը պիտի կրնայ հասկը՝ ուրիշ, ինչպէս որ իրենք կը հասկնան:

նոր տեսչութիւնը կը վարէր անի, ամեն հաւա-
տարմութեամբ ու կանոնաւորութեամբ : Իւր
մեծերը այնքան գոհ էին անորմէ, այնքան կը
սիրէին զանի՝ որ ինքնայորդոր փութացին ցա-
ւաթի հիւանդութեանը միջոցին, անոր թոշակի
հատուցումը լիովին շարունակել, և մինչև վերջի
օրերու իրենց քաջալերական նամակներովը կը-
մխիթարէին զանի :

Այս եղական բարերարութիւնը՝ այնքան ա-
նի պատիւ կը բերէ մէսիէ՝ Միշէլ, Գօլլատ և
Պոտուի գաղղիացի յարգելեաց՝ որքան որ ներ-
կայ տաղնապալի ժամանակներու մէջ, կատար-
եալ Նախախնամութիւն մ'եղան անոնք մեր
դժբաղդու անոք բարեկամին, անոր ցաւերը
ամբարշտելով : Այս յարգելի անձերը գիտէին ան-
շուշտ, թէ ինչ հաւատարմութեամբ անձնուէր մարդ
մը կը վարձատրէին : Մենք ևս համոզուած ենք,
թէ քիչեր կրնան Պապայանի պէս այսպիսի մեծ
առատաձեռնութեան մը արժանի ըլլալ ու ա-
մենու սիրտերը գրաւել :

Մեր բարեկամին քաղաքիս բրած ծառայու-
թիւնները, անոր կենդանադէտ ընթացքը ու
բարերարութիւնը ամենու ծանօթ է իրմերի
մէջ, և բոլոր զանի ծանցողները մեզի հետ կը-
միանան այսօր անոր մահը սրբալու . . . :

Կեանքը որ շուրջի պէս բան մ'է և մարդս որ
ցոյցի մը պէս կը ցոյցի՝ այս ախուր փոսին առջեւ
կ'երևին ու մեր գոյութեան ունայնութիւնը մե-
զի կը յիշեցնեն : . . . :
Երթաւ բարեաւ ուրեմն սիրելի մեր Պապա-
յան, մեր երջանիկ ու թշուառ օրերու բարե-
կամը, երթաւ բարեաւ . . . : Կուգէինք
զիս զերեզմանդ մայիսի վարդերով ու ծաղիկ-
ներով լեցնել, ինչպէս և դուն մեր սիրտը զը-
տարթ ու թեմամբ լեցուցած ես միշտ . . . : Բայց
ծաղիկները կը թաւաւանին ու մահաբանները կը-
հիշանան : Իսկ քու մտերմութեան և համակիր
սիրտդ, յիշատակը պիտի մնայ միշտ այն անկեղծ
բարեկամացոյ սրտին մէջ՝ որոնք զքեզ կը յիշեն
և պիտի յիշեն ցմահ :

Պապայանի բարեկամները :
Չմիւռնա, 8 Մայիս 1878

Չմիւռնա, 10 Մայիս 1878
Յարգող խմբագրապետ,
ՄԱՍԻՍԻ 2119րդ թուոյն մէջ հրատարակեալ

Նախակիս մէկ պարբերութեանը նկատմամբ՝
Չմիւռնոյ ազգայնոց ունեց կողմանէ ձայներ կը
հանին ականջիս :

Բացատրութիւն մի :
Սկիւր անուամբ քաղաքիս մէջ անդարմանի
վերք մը կայ : Ասի ընդհանրապէս տարեւոր կա-
նանց և մասնաւորապէս մանկամարդ տիկնայց
կը պատահի : Այս հիւանդութեան յունարէն ա-
նունը իսկիւր՝ սխալմամբ իսկիւր հասկցած ըլլա-
լով՝ հայերէնը շան—խոց թարգմանեցինք :

Կըրպալինք որ այս հայկական սխալ վերած-
նութիւնը թիւր մեկնութեանց և չարաչար են-
թադրութեանց տեղի տուեր է : Ուստի կ'փու-
թամուզող վերապալս, կրկնելով որ մեր միտքը
միայն սկիւր խօթութիւնը ականարկել էր և ոչ
այլ ինչ :

Ա. Յ. ԱՅՎԱԶԵԱՆ
Ըստ ինդրոյ յարգող Պ. Այվազեանի գնահատիչ
բացատրութիւն իւր հրատարակելէ ետեւ, հարկ
կը համարեմք նոյն բացատրութեան վերայ և
զմերն յաւելցնել :

Սկիւր հիւանդութիւնն քաղաքիս մէջ տարա-
ծեալ չէ : այլ կը պատահի, ինչպէս ուրիշ շատ
քաղաքացի մէջ ևս կը պատահի : և անշուշտ Կ.
Պօլսոյ գեղեցիկ սեռն ևս ազատ չկրնար լինել
այս խօթութեանէն, զոր Պ. Այվազեան հարկաւ
տեսած պիտի լինի նոյն մայրաքաղաքին մէջ ուր
կը գտնուի իւր հաստատուն բնակութիւնը :

Նախակարգին իւր ձախորդ սխալին վերայ
զգացած ցաւն կը նշուի մը : բայց ոչ սակաւ
իրաւացի կը ընենք նաեւ զձայներն որք հասեր
են նորա ականջին ընդդէմ հետեւեալ անտեղի
պարբերութեան զոր կը տեսնեմք Մախի մէջ :

« Չմիւռնի » գեղեցիկ սեռին համար տարածիչ
ախա մը տեսայ, շան—խոց : Ա՜հ, քանի քանի
մանկամարդ տիկնայք և շուշանաթոյր ծաղիկ-
ներ այն անդարմանի խոցոյն գոհ գացած և
իրենց տունը սուգի մէջ ընկնում էին : »

Ի տեղեկութիւն նամակագրին՝ հարկ կը հա-
մարեմք ծանուցանել, թէ այս հիւանդութիւնն
դուն ուրեք կը պատահի մանկամարդ տիկնայց,
մինչեւ ինքն կը թէ մասնաւորապէս նոցա
կը պատահի . . . :

Չմիւռն, 10 Մայիս 1878
Յարգող խմբագիր Արշալոյս լրագրոյն :
Քաղաքիս ազգային վարչութեան գովելի ու

բոլորներ սուրբ Ստեփաննոս եկեղեցոյն առաջ
գրան ներքին երկու կողմի պատերուն մէջ մէյ-
մէկ մարմարեանայ յիշատակարաններ դրուե-
ցան, որոնցմէ առաջինը մեծա. Խաչատուր Գա-
րագալեանի, և երկրորդն՝ հանգուցեալ Բա-
լուցի բարեկիցատակ Խաչատուր Ղազերեանի
բարերարութեանց կը վերաբերին : Վստահու-
թեամբ կը տեսնուի որ այն երկու յիշատակարաններն
ալ ամեն ազգայնոց հաւատար համակրութեանը
և շնորհակալութեանը արժանի եղած են : Բայց
ներու ինձ մի դիտողութիւն ընել, այսինքն
թէ երկրորդ յիշատակարանին մէջ ժամանակա-
գրախառն սխալ մի կայ : վասնզի ծեփի շինութեան
թուականը դրուած չըլլալով, ժամանակ անցնե-
լէ յետոյ այնպէս պիտի հասկցուի որ իւր թէ
եկեղեցոյ ծեփը և յատակաշինութիւնը 1878
տարւոյն մէջ կատարուած են : մինչդեռ յայտնի
է որ ծեփը չեմ կրնար լու գիտնալ բայց գրե-
թէ 18 տարւոյ չափ յառաջ կատարուած է :

Արդ մեր գերա. Առաջնորդ Հօր և Բաղաքա-
կան Ժողովոյն կատարեալ խոհմութեանը և
արդարապէս թեմայ վստահանալով, խո-
նարհարար կ'առաջարկեմ որ սոյն յիշատակա-
րանին մէջ ծեփի շինութեան համար Գ. Ն. Բ. թուա-
կանը աւելցնելու բարեհաճին :

Յարգող տէր, ինքերեւոյ որ սոյն դիտողու-
թիւնս Ձեր ազգօգուտ լրագրոյն յառաջիկայ
թուոյն մէջ հրատարակելու հաճիք, մնամ

Իրաւաց Գալստիանոս Գրիգորով

Յօժարամիտ կը փութամք հրատարակել զհե-
տեւեալ նամակն որ անշուշտ ազգային բանասի-
րաց ուշադրութիւնը պիտի գրգռէ :

Չմիւռն, 10 Մայիս 1878
Այս յարգամեծար պատուելի Պ. Սաւալանեանց,
ի քաղաքիս :

Արշալոյս վերջին թուոյն մէջ առ մեծարայ
սօքթօր Հ. Բեռեմիան ուղղեալ նամակդ խո-
րին ուշադրութեամբ կարդացի, որ կը վերաբե-
րէր Մովսէսի խորենացոյ պատմութեան (գիրք
Ա. գլ. Բ.) մէջ եղած ծածկաբանութեան : Սոյն
հատուածը, ինչպէս ինձ, նոյնպէս ազգային,
մանաւանդ օտարազգի հայերէնադէտ գրագի-
տաց ուշադրութիւնը գրաւած էր : մինչև կար-
ծել տալ ունեց թէ գրեց անուշադրութեանէն
սպրդած սխալ ըլլալ, և հեղինակին հարազատ
խմատը խանգարած : և մինչև անգամ առեղ-
ծուած համարել : Այսպէս վիկտոր Լանկուա
յիշեալ պատմութեան նոր թարգմանութեան

Արժան համարեցաք մեր բանասեր ընթերցողաց աջաց ներքեւ գնել զՅա-
ռաջաբանն նոր Գերակառնութեան Ա. Մ. Գարագալեան պատուելիին, որ
տպեալ է ի Կ. Պօլսոյ յամիս 1873 :

Գիտնական հեղինակն՝ նոյն Յառաջաբանին մէջ՝ մեր գրաբան լեզուին
վերայ իւր ունեցած համոզմունքն կը յայտնէ, որ բոլորովին հակառակ են
Ա. Մամուլոյն համոզմունքն նոյն խնդրոյն նկատմամբ : Բայց զայսմանային
այն է, որ Պ. Մամուլեան իւր վերջին ամատեարին մէջ յառաջ կը բերէ
զանոն Գարագալեան պատուելիին իբրեւ համամիտ ինքեան :

Ահաւասիկ յիշեալ Յառաջաբանն, որոյ ի վերայ հրապարակեմք գուշա-
դրութիւն ընթերցողաց մերոց :

Ազգային գաղղիացի մէջ Հայերէն գրաւոր լեզուին ուսման տրուած
կարեւորութիւնը անանկելով՝ այս քերականութիւնը կարելի եղածին
չափ ճոխ և կատարեալ ընել արժան համարուած է : մանաւանդ որ
ուրիշ համառօտ քերականութիւն մը ի պէսս նորագոյն ուսանողաց
արդէն ի լոյս ընծայուած է :

Քերականութեան հեղինակն այս տպագրութեան մէջ այն ամէն
փոփոխութիւններն ու յաւելումներն ըրաւ զոր իւր և այլոց փոր-
ձառութիւնը կը թելադրէին, և զոր գրաւոր լեզուին ուսման ազգա-
յին գաղղիարականութեան մէջ ունեցած և ունեցալու բազմադիմի
կարեւորութիւնն կը պահանջէր : Հեղինակը գրաբարին ուսմանը նկատ-
մամբ ազգային գաղղիացի ըրած նախադասութիւնն այնչափ աւելի
կը յարգէ որչափ համոզուած է թէ Հայ սերնդեան արդի լեզուին
ինչպէս ծնունդը գրաբարէն է, նոյնպէս աճումն ու զարգացումը
գրաբարով պիտի ըլլայ : Այս տեսութեամբ գրաբարին ուսումը մեր
ազգային նախակրթական դաստիարակութեան առաջին և գլխաւոր
մասը պիտի ըլլայ մինչև որ ազգային արդի լեզուն ժամանակիս գիտ-
նաբար և գրադիտական պիտոյցը բաւական ըլլալու վիճակին հաս-
նի : Այս կարեւոր վիճակին, ուր կը լինայ մեր լեզուին, նա մանա-
ւանդ մեր մասց զարգացումը, արդարեւ քանի մի ծամբով կրնանք
հասնիլ : Բայց ո՞վ կրնայ ըսել թէ այն ծամբաներուն մէկն ալ գրա-
բարն ուսումը չէ : Հոն պիտի գտնենք նոր և ճշգրտոյն գաղա-
փարներու պատկերներ, խորին մտածութիւններու և փափուկ ըզ-
գացումներու ձեւեր : հոն է մեր գոյացնելու լեզուին եթէ ոչ կեր-
պական անշուշտ նիւթական մասը, և ո՞վ գիտէ, թե երբ ևս այն լեզուն
որուն կարեւորութիւնը կ'զգանք և առ որ կը գիմենք՝ նոյն իսկ մեր

հին գրաբար, երբեմն նաեւ հետեւ կոչուած լեզուն է :

Գրաբար լեզուն կարօտութիւնն օր ըստ օրէ աւելի զգացուելով,
հարկաւ անոր ուսման դիմելքները, յորոց մին է քերականութիւնը,
հետզհետէ նոյն կարօտութեան լրմանը յարմարապէս գործուելու են :

Որովհետեւ Ա. Մամուլն իւր վերջին՝ այսինքն՝ Նոյեմբեր եւ Դեկտեմբեր
յարակցեալ տետրին մէջ, կը յիշէ հաւաքած խորիման սրբագան Հայրիկին
իբրեւ աշխարհաբանեան եւ անտեւաբար իբրեւ համամիտ ինքեան, հարկ կը
համարեմք Նոյն Մրբագրութեան Հրապարակ Արարատեան անուանեալ եր-
կասիրութեան (որ տպեալ է ի Կ. Պօլսոյ 1876ին), հետեւեալ ոտանաւոր
տողերը յառաջ բերել : յարաբանեալ եւ ուշադիր ընթերցողն պիտի տեսնէ,
որ խորիման սրբագան խառն կը զատապարտէ զսխալ դատողութիւնս Ա.
Մամուլոյն ի մասին մեր գրաբար գեղեցիկ լեզուին, եւ քե Պ. Մամուլեան յոյժ
ձախորդութեամբ ի պաշտպանութիւն իւր կողմէ Հայկաբան եւ
գրաբանեան սրբագանն :

Թողէք ինձ, մանկուհի, ատենէ գանդատ բառնամ հեղինակ Հօրն
Ձայն անհաւան քերականաց, որ զհին լեզուն հարթել ճշդին .
Ասին թէ Սահակ մեռաւ, մեռաւ լեզուն և թաղեցաւ,
Հարկ է թողուլ զայն ի բաց և կենդանի լեզուաւ վարիլ :
Հին լեզուն սարուկ լիցի և իշխեսցէ բերտ աշխարհին :
Ձոր առաւել կոկիւղ ի բան, ասեն, գիտեմք, նոր արուեստիւ :
Ձառու երկայն կարճեմք անյօդ : չեն պիտոյ կապքն ձայնաւորք :
Ձօրեղբայրն և զմօրեղբայրն կարեմք հընչել հօրար մօրար :
Եւ այսպէս համառօտեմք ըզբօղանդակ Հայոց բարբառ :
Իսկ դու զինչ խօսիս առ այս, Հայր գաղղութեան, ո՞չ զայրանաս,
երբ որդիք յանգրգունք զհիմն լեզուն չըրջել ջանան :
Ըզընդորհ, զվայելութիւն, զգաճնակ հընչումն աղարտելով,
Ձոր յոլով դարք կաղմեցին և քո հանձար մըշակեաց զայն :
Քո շնորհիւ պայծառացաւ եկեղեցին օրհներգութեամբ :
Քո շնորհիւ Մովսէս, Յիսուս խօսին ընդ մեզ կտակարանաւ :
Քե թող մանկտին զխորուն և ըզնունին զօտարածայն,
Քե լեզուքն ծանրախօս՝ արդ խիզախին արագ ախօս :
Դիք մանկունք, ըզլուլաւք ձեր ընդ առաջով Սահակայ հօր :
Ձայնդ բարձ, սուրբ Հայրապետ, օրհնեալ զմանկտին զի զարգացին
Եւ մի՛ լիցին ժպիւրհ ձեռօք, փոխել դըրժել ըստ հաճոյց,
Այլ սիրել, խօսիլ, գըրել, և բարբառոյդ պահել զաւանդ :

մէջ նոյն յօդուածին եկած ժամանակ՝ կանգ առնելով, հետեւեալ կերպիւ կը յայտնէ իւր կարծիքը ծանօթութեան մէջ. «Սոյն հաստատաժողովը զանազան եղանակաւ թարգմանելու փորձ փորձուեցաւ, դեռ մինչև ցայսօր առեղծուած մի կը մնայ. որոյ իմաստից թափանցել անկարելի կերելի. Պէտք է կարծել որ սոյն հաստատաժողովը իմաստաւ ըլլայ հին օրինակոյնէն, որոնք յիշեալ անդամոյն միտքը չըմբռնելով, բնագիւրք խանդարած ու անհասկանալի ըրած են» (Հաստատաժողովի հին և նոր պատմագրաց հայաստանի) :

Նոյն կարծիքն ու միտքը իւր կը պահպանէ միւս անգամ. իստաւ. և այլն թարգմանութեան մէջ. վասնորոյ պատմական մեծ ու դարաւոր ինքիւր մի լուծուած կը համարուի գրագիրական աշխարհին առջև. և կը պարտաւորուի ազդ ունեն չնորհապարտ լինել լուսաբանող բանասէրին :

Եթէ դիտողութեան կէտ մի կընշմարուի լուծման մէջ. այն է տպագրութեան հետ ունեցած տարբերութիւնը. և եթէ կընդունիք դուրս, և ընդ ձեզ բանասէրք ազդիս, կը համարուի իմ ես այլ կարծիք մի յայտնել, ոչ հաստատելով, այլ առաւել ուսումնականաց ու հասարակաց հետաքրքրութիւնը շարժելու և լոյս մի տալու. այն է տպագրեալ օրինակին վերջին երկու տառերը որ է «գլխաւ առ Սէ» լուծելով կարգաւ «գլխաւ առ Սէն Սէն առ Սէն Սէն» : որովհետեւ Սիւսիս խորհրդացի այսպէս կըսէ. «Այլև զմեծամեծս և զզարմանալոյ արժանաւորս յարուստից», որով կրնամք ազատական արուեստից կարգին մէջ իմանալ և զերամատաժութեան ազնիւ և հին ժամանակները թաղաւորական գերդաստանաց վերապահեալ արհեստը եթէ սոյն կարծիքս ընդունուելու լինի, պատիւ կը համարիմ անձինս և Ձեզ մնամ չնորհապարտ ՆՈՐԱՅՐ

ՔԱՆԱՔԱՆ ԽՈՒՐԵՐ

Զմիռնիա, 13 Մայիս :

Քաղաքիս թիմարէթին մէջ անցեալ երկու շաբթի օրն մեծ ժողով մի եղաւ առ ի քննել և գտնել զլաւագոյն եղանակ նոր հարկապահանջութեան միոյ ի բոլոր դաւառն Այսթնի առ ի գործակից լինել թղթադրամոյն՝ բարձրմանը : Մի քանի առաջարկութիւնք եղին և համառօտ կերպիւ քննուեցան. սակայն այս խնդիրն հիմնական և խորին քննութեան կարօտ լինելն հասկցուելով, ժողովն համամտութեամբ արժան համարեցաւ որ և՛ որոշումն չընել առայժմ և երկրորդ ժողով մի գումարել յառաջիկայ եօթնեակի :

—Աւագակաց քանի մը գնդեր երևան ելլելով ի չընկալալ Մանիսայի, դաւառիս ոստիկանութեան գնդապետ Եսայի—Պէյն երեքշաբթի օրն գէպ ի Մանիսա գնաց 60ի չափ զինուոր հետ տանելով առ ի հալածել աւագակներն :

—Այսթնէն հասեալ նամակներն ևս կը ծանուցանեն թէ նոյն սանձաքին մէջ բազմաթիւ չորագործներ կը գտնուին, որք 15—20 հոգի մէկ տեղ կը պաշտին նոյն երկիրը և մասնաւորապէս կը պաշտեն ի գլխաւոր ծանապարհս, և ծանապարհորդաց վերայ յարձակելով կը խոչընդոտեն և կը վիրաւորեն զանոնք, և երբեմն կը պանդանեն թէ գէթ գնող լինի :

—Քաղաքիս մէջ նաև, գլխաւորապէս, մեծ և փոքրիկ գողութիւնքն և յափշտակութիւնքն կը շարունակեն թէ ցորեկ և թէ գիշեր ժամանակ : Վերջապէս հաստատակաց ապահովութիւնն գոհացուցիչ վիճակի մէջ չգտնուիր ամենին :

—Զօրեքաբթի երեկոյն մարդասպանութիւն մի տեղի ունեցաւ Հաճի Սթամ փողոցին մէջ, որոյ բնակիչքն մեծապէս խռովեցան : Կը հաստատեն թէ սիրահարութիւնն պատճառ եղած լինի յիշեալ մարդասպանութեան :

—Երէկ գաղղիական Սթամանուր շոգենաւով մեկնեցաւ ի քաղաքէս մեծաշուք մահտեսի Յոհաննէս Եֆէնիին Սթաւրալըեան, որ ընկերութեամբ իւր ընտանեաց ի Մանիսայէն կը թափաք Մարտիկայէն և փառիզէն անցնելով :

—Միւս օրն առ ի մեկնեցան լատինաց Աւագանիքը՝ մեծաշուք Սթաւրալըեան, որ

պէս և մէսիէս Սալաւանի, Կիֆրէ և Քուզինէրի երեքի գաղղիացիքն : Այս վերջինքն ի փառիզ կը թան զԱրուստահանգէսը տեսնելու, որ Մայիսի 1ին (ն. Տ.) բացուեցաւ փառաւորապէս և արտաքոյ գարգի շքեղ հանգիսիս :

—Երէկ Մեծին—Բրիտանիոյ Վիքթորիա Թագուհին տարեկարձն լինելով, նոյն տեղութեան քաղաքիս հիւպատոսարանն սովորական հանդիսիւ կատարեց զյիշեալ տօնախմբութիւնն :

—Մայիս 11—23 ամաթուով ի Կ. Պօլսոյ արձակեալ հեռագիր մի ծանրակշիւ ախուր լուր մի կը հաղորդէ, որ հետեւեալն է.

Ի գիշերիս այսմիկ մեծագոյն մասն գրառանց Բարձրագոյն Դրան հրոյ ճարակ եղեւ, և միայն Մեծ—Եպարգոսի դիւանատունն ու արտաքին գործոց պաշտօնատան մի մասն աղատեցան :

—Միւս օրն ամաթուով ի նոյն մայրաքաղաքէն կը հեռագրեն թէ Եւփարոֆ կոմսն հասեալ է ի Լոնտօն և թէ երթալով կը զօրանայ յոյսն որ դեսպանաժողովն պիտի գումարուի առաջիկայ Յունիս ամսոյ մէջ : Կըսուի եղբր նաև թէ մօտիւ Բուսանի ասպետն որոշուել է իւրեւ Ռուսիոյ երկրորդ լիակատար դեսպան յիշեալ ժողովոյն մէջ :

—Ռուսիոյ նորընտիր դեսպան ի Կ. Պօլսի Լուսնօֆ Ռոսթովը ի իշխանն սովորական հանդիսիւ ներկայանալով օգոստոսիս Սուլթանին, մատոյց նորին կայսերական վեհափառութեան զվկայագիրս, որք յանձնեալ էին նմա յօգոստոսիս Զարէն ամենաց Ռուսիոյ :

—Իւլայի երկրորդ աստիճան չորհեցաւ վեհաշուք խորհրդան Գրիգոր Եֆէնիին որ Բարձրագոյն Դրան արտաքին գործոց պաշտօնատան մէջ համարհակալ է :

—(Կ. Պօլսոյ) Ս. Պատրիարք հայրը, կըսէ ՄԱՍԻՍ, Բ. Դրան հաւանութեամբ երեք վարդապետ զրկեց Հայաստանի կողմերն, որպէսզի Հայ ժողովրդոց միմեկին աչքէ անցնելով՝ յորդորեն որ քիչ մը ժամանակ ևս համբերեն և որիչ երկիրներ չգաղթեն : Սոյն պաշտօնը կատարող վարդապետներն են՝ արժա. Գարեգին վարդապետ Սուրանձտեանց, արժա. Վահան վարդապետ և արժա. Արիստակէս վարդապետ, որք երկու շաբթի օրն մեկնեցան :

—«Լրագիր» անուն ազդային թերթին Մայիս 4 թուոյն մէջ զհետեւեալ տողն ընթերցուեց.

«Զմիշտագէտ վերջին փաստայով դարձեալ ցուալի և տխուր լուրեր կը հասնին առաւել դժուրակ քան զառաջինս : Քրդաց բռնութիւնք և ոճիրք մէկ կողմէն (նորէն այս անգամ երեք հայազգի սպանուել են), պաշտօնավորաց զեղծմունքն ու խտրութիւնք միւս կողմէն, խորրեքդի կառավարութեան դիմելով ապարդիւն եղած ձեռնարկներ ամեն դիէն, ժողովուրդը յուսահատ և ճարահատեալ տունը տեղը թողլով գաղթելու պատրաստ. իսկ Քիւրտք գիւղերը պաշարած ըլլալով, տեղէն շարժելու անկարող, արտերն և վարուցանք երեսի միայն մնացած, ապագայ սովու մ'երկիր զն ու մոտ տանջութիւնը մէկդի . . . Կ'իմանալք թէ Զմիշտագէտ այս մասին արտառուածոր և սքրտակտուր պաշտօնական տեղեկագիրք ալ զըրկուած են Ս. Պատրիարք Հօր, ազգու և անմիջական դարման հայցելով» :

—Նիւ—Երբէն Մայիս 3—15 ամաթուով յուղարկեալ հեռագիր մի իմաց կաւտայ թէ Ռուսիան Ամերիկոյ մէջ 200.000 պատրաստ հրացան գնելէ ետեւ 300.000 ևս ապագրեր է :

—«Վաքիթ» թուրքերէն լրագիրն կը ծանուցանէ թէ Կ. Պօլսոյ երկու գլխաւոր օրագրաց տնօրէնքն, այսինքն մօտիւ Ն. Պօրտէանօ որ «Լա թուրքի» գաղղիարէն թերթին խմբագրապետն է, և միտար Ռիթէքըր որ «Լիվինթ Հէրըլտ» անգլիական թերթին խմբագրապետն է, Օսմանիէ կարգին երկրորդ աստիճանի շքանշաւա պատուեցան ի վեհա. Սուլթանէն՝ յապացոյց իւր կայսերական գոհունակութեան :

—Կ. Պօլսոյ ՄԱՍՈՒԼ հանգէսն, որ ի մի քանի ամսոց հետէ գաղարեալէր, գարձեալսկաւ հրատարակիլ խմբագրապետութեամբ յարդոյ պարոն Գ. Ալվազեանի. որում յաջողութիւն և յարատեւութիւն բարեմաղթեմք :

—Թիֆլիզի ՄՇԱԿ օրագրոյն Սպրիլի 12 և 13 թուոց Բանասիրականին մէջ կընթերցուեց ըզհայերէն թարգմանութիւնն «Գեսպանաժողովն և Հայր» (The conference and Armenians) անուանեալ անգլիարէն տետրակին՝ հրատարակելոյ ի Լոնտօն, 1878 :

—Յանդեղում շաբաթու ընկալաք ի յարդոյ թղթակցէն մերմէ՝ որ ի Պաղէլ, բանասիրական ընդարձակ և պատուական յօդուած մի, զոր պիտի չապապիմք ի լոյս ընծայել Արշալուսոյ միջոցաւ : Այս յօդուածն Հայ գործաւորաց և բարոյական վիճակին նորոգութեանը վերաբերի :

Առ պարոն Բ. Ս. Ք. յԱՅԹԱՅ :

Զպատասխանի նամակին ձերոյ յուսամ ընդունել անյապաղ յԱՅԹԱՅԻ երկուց ուսա նողաց ճեմարանին Ս. Էջմիածնի, և հասուցանել ձեզ զայն փութով :

—Մեր նախորդ թուոյն 4օրդ երեսին ջորք էջին մէջ՝ փոխանակ Արշալուսի դեսպան միտար Լէյքրա տեսելոյ, սխալմամբ Ռուսիոյ դեսպան գրած եմք : Սխալ մի, զոր ընթերցողն հարկաւ ինքնիւրմէ արգէն ուղղած է :

ԱՌՆԻՏՐԱԿԱՆ

Ընդհանուր կացութիւնն հանդարտ է միշտ. Բանասիրական մեքենայով մաքրուած ընտիր տեսակի կուղուի և գրեթէ 650 հակ վաճառեցաւ 350—355 զուրուշով առ կենդինարն. իսկ Աստանայի տեսակին արժէքն 315 է :

Արթիւնէն յայսմ շաբաթու միայն 35 կողով վաճառեցաւ 127 1/2 զուրուշով առ չէքին : Թէպէտեւ այս գինն աժան է նոր հնձոյն նուազութեանն բաղդատութեամբ, այսու ամենայնիւ ի պատճառ հանդարտ կացութեան վերաբերեալ բազում գնողք չլինելով ի շուկայի մերմէ և վաճառողք հարկաւորութիւն ունենալով ի դրամոյ, յիշեալ վաճառումն տեղի ունեցաւ : Փալամուտի Անգղիոյ տեսակէն և «Երազիւր» կողած տեսակէն իբր 4000 կենդինար վաճառեցաւ 92—132 զուրուշով, ապրանքին լատութեանը համեմատ :

Ռիսարի անլուայ բուրդին արժէքն 260 զուրուշ է առ կենդինարն :

ԿԱՆՈՒՅՈՒՄ

Մեր քաղաքակից յարգոյ Պ. Գրիգոր Ս. Սիմօն-քիեան, որ գաղղիարէնի, բուրբէքի եւ հայերէնի ըստ բաւականին հմուտ է, կը փափաքի դասախօսութիւն ընել քե' մասնաւորապէս Լ. քե' վարժարանաց մէջ : Համապատասխան յոյժ յաջող է քարգմանութիւնք ընել նոյն լեզուաց մէջ. և մասնաւոր բուրբէքի աղիքստգրեք շարադրել :

Յիշեալ ուսումնական երիտասարդն իւր ուսումը ի Փարիզ քրած է, և մի քանի տարի գրագրութեան պաշտօն վարած է ի Բարձրագոյն Գուման :

ՆՈՐ

ԸՆԹԵՐՑԱՐԱՆ

Ա. ՄԱՍՆ

Քաղաքիս Մսերեան նորահաստատ տպարանէն ի լոյս ընծայեալ երկրորդ գործն է բաղկացեալ ի վեշտասանածալ 64 երեսաց, եւ կը պարունակէ համառօտ բարոյական եւ գուարհալի խրատներ :

Գինն է ֆր. 0 35 սանդիմ :

Զարուժական հաստատութիւն ի Զմիւռնիա :

Առաւօտուն՝ ժամը 7ուկէսն մինչեւ ժամը 10 երկրորդ համար, եւ 10եկ մինչեւ կեսօրին վերջ ժամը մեկ կանանց համար : Դոյնպէս կեսօրին վերջ ժամը 4եկ մինչեւ 6ուկէս հաստատութիւնք բաց պիտի մնայ :

Խմբագիր—տէր լրագրոյս, Գ. Լ. Գ. Պալապալէ :

Ի ՏՊԱՐԱՆԻ ԱՐՇԱՒԱՅՈՒՆՈՅ ԱՐԱՐԱՏԵԱՆ